Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

no. 5/9

ZPUZUZ9

631.5
Z-94

1931.

04 AUG 2010
31-К
1136
694

ՀՈԳԺՈՂԿՈՄԻՍ

Ա. Բ. Վ.

ՀՐԱՀԱՆԳ
ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ԳԾՈՎ
ՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԳԵՏՀՐԱՏ 1931 ԵՐԵՎԱՆ

631.5
Հ-94

Գրատնպված № 6319 Պատվեր № 1761 Տիրաժ 1000

Պետհրատի տպարան Երևանում

ՀՐԱՀԱՆԳ

ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ԳԾՈՎ ՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Մեր հացահատիկային կուլտուրաների բերքի խոշոր տոկոսը ոչնչանում է անկային հիվանդություններից, գլխավորապես քարամրիկից, ուստի և մեր հերթական խնդիրներից մեկն է համարվում կազմակերպել մրիկի դեմ պայքարը այնպես, որ առաջիկա տարիներում նրան միանգամայն դուրս վանենք մեր դաշտերից։ Դրա համար անհրաժեշտ է անպայման, ցանքից առաջ քարամրիկով վարակված հացահատիկները (ցորեն, գարի, տարեկան և այլն) ախտահանել։

Ախտահանման աշխատանքները տարվելու յեն գյուղատնտեսության և անտառային տնտեսության փասատուների դեմ պայքարող ընկերության (ՈԲՎ-ի) միջոցով։

Շրջաններում ախտահանման աշխատանքները տանելու յեն ՈԲՎ-ի Միջ. Շրջանային կայանների հրահանգիչները, առանձին շրջաններում՝ նրանց յենթակա տեխնիկները, իսկ գյուղերում

22.08.2013 16884

ախտահանման աշխատանքները անմիջապես կատարելու յեն բրիգադիրները, համաձայնեցնելով այդ տեղական հող օրգանների հետ։

ՀՐԱՀԱՆԳՉԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա) Հրահանգիչը պատասխանատու յե իր շրջանի ախտահանման ամբողջ աշխատանքների և պլանի կատարման համար։

բ) Ստանում է Շրջանային Արտակարգ Լիազորից ստույգ տեղեկություններ (ըստ առանձին գյուղերի) ախտահանվելիք սերմացվի քանակի և ցանքսի սկսման ու տեվողության մասին։

գ) Ախտահանման աշխատանքները ըստ պլանի դասավորում է այնպես, որ առաջին հերթին անց կացրվի այն գյուղերում, որտեղ ցանքսը ավելի վաղ է սկսվելու և առաջին հերթին ախտահանվի կոլտնտեսությունների, հետո չքավորների, միջակների և վերջում ունևոր գյուղացիների սերմացուն։

դ) Հնարավորություն է ստեղծում տեխնիկներին գյուղից գյուղ փոխադրելու նաև մեքենաները, ինվենտարը և դեղորայքը շրջանի գյուղերը տեղափոխելու համար։

ե) Տեխնիկներին բազմակողմանիորեն ծանոթացնելով տալիք աշխատանքների հետ և նրանց տրամադրելով անհրաժեշտ նյութեր, ուղարկում է համապատասխան շրջաններում ախտահանման աշխատանքները ղեկավարելու։

զ) Ստանում է տեխնիկներից շրջանում ախտահանված սերմացվի քանակի մասին տեղեկություններ և ի մի ամփոփելով, վոչ ուշ, քան առաջիկա դեկադի 3-րդ օրը հայտնում է ՄԻՊ-ին պատճեն Հողբաժնին, իսկ ՄԻՊ-ն էլ վոչ ուշ, քան առաջիկա դեկադի 4-րդ օրը հայտնում է ՌԲՎ.-ին։

ՏԵԽՆԻԿԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա) Գյուղում բրիգադիրի աշխատանքների համար, վերցնում է ագրո-լիազորների 15-որյա կուրսերը անցած ընկերներից և նրանց գործնականում ծանոթացնելով ախտահանման աշխատանքների հետ, հանձնարարում է ախտահանման գործը գյուղում և նոր անցնում մյուս գյուղերը։

բ) Իրեն հանձնարարած շրջանի բոլոր գյուղերում ախտահանման գործը դնելուց հետո, շրջում է բոլոր գյուղերը, ստուգում է տեղում բրիգադիրների աշխատանքները և տալիս բացատրություն մութ մնացած հարցերի վերաբերյալ։

գ) Ստանում է բրիգադիրներից գյուղում ախտահանված սերմացվի քանակի վերաբերյալ դեկադային (10-որյա) տեղեկություններ և ի մի

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм ССР
ИМ. А. МЯСНИКЯНА
56/81-66

ամփոփելով իր շրջանի ամբողջ տվյալները, հայտնում և հրահանգչին, վոչ ուշ քան հաջորդ դեկադի յերկրորդ որը։

դ) Իր շրջանում ախտահանման աշխատանքները ավարտելուց հետո կազմում և ամեն մի գյուղում ախտահանած ամբողջ սերմացվի քանակի վերաբերյալ առանձին ակտեր (համաձայն կցված ձևի) իր և գյուղարտակարգ լիազորի ստորագրությամբ և ներկայացնում հրահանգչին։

ԲՐԻԳԱԴԻՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գյուղում ախտահանման աշխատանքների համար, բրիգադիրներ տրամադրում է գյուղխորհուրդը, վորոնց վարձատրությունը գործարքային է։

ա) Բրիգադիրը ստանալով տեխնիկից հրահանգ և գործնականում ծանոթանալով ախտահանման աշխատանքների հետ, նոր անցնում է գործի։

բ) Բրիգադիրը պատրաստում է Ֆորմալինի լուծույթ—թաց ախտահանման համար (համաձայն ներքև բերվող դոզաների) և տալիս է չոր ախտահանման համար գործադրվող դեղորայքի դոզան (չափը) և կշռում ամեն անգամ ախտահանվելիք սերմացվի քանակը։

գ) Բրիգադիրը ախտահանման և յենթարկում գյուղում յեղած ամբողջ սերմացուն։

դ) Կազմում է ցուցակ ամեն որ ախտահանված սերմացվի քանակի մասին և ներկայացնում է տեխնիկին, իսկ պատճեն գյուղխորհրդին ամեն տաս որը մեկ անգամ դեկադի վերջին որը ախտահանած սերմացվի քանակի մասին տեղեկություններ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ըստ առանձին տնտեսությունների ախտահանած սերմացվի քանակի մասին լրիվ տեղեկություններ և ցուցակ պահում է գյուղխորհրդի ներկայացուցիչը։

յե) Գյուղում ախտահանման աշխատանքները ավարտելուց հետո, բրիգադիրը վերջնական հաշվետվություն է ներկայացնում տեխնիկին, տեխնիկը՝ շրջանի հրահանգչին, հրահանգիչը՝ ՄԻՊ-ին, իսկ վերջինս էլ ՈՒԲՎ-ին։

ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Սերմացուն կարելի յե ախտահանել թաց և կիսաչոր մեթոդներով, վորի ժամանակ, վորպես ախտահանող նյութ, գործադրվում է Ֆորմալինը և չոր ախտահանման մեթոդով, վորի ժամանակ գործադրվում է ածխաթթվային պղինձ (Углекислая медь) և պղինձաջրազուրկ անհիդրիտը (безводный медный купорос)։

1. ՉՈՐ ԱԽՏԱՀԱՆՈՒՄ.— Չոր ախտահանումը մեզ մոտ տարվելու յե չոր ախտահանիչ «Ուրոժայ» մեքենայով հետևյալ կերպ. մեքենայի թևը

դեպի աջ պտտելով, բացվում է կափարիչը լցնում ենք գլանի մեջ կես ցենտներ (50 կիլոգրամ) սերմացու և 100 գրամ ֆունգիսիդ ածխաթթվային պղինձ կամ պղինձաուջասպի անհիդրիտ), վորից հետո մեքենայի թեվը պտտելով դեպի ձախ կափարիչը փակվում է և ամրացնելով կրյուչոկը սկսում ենք պտտել թեվը այն հաշվով, վոր մեկ րոպեում մեծ անիվը կատարի 50-60 պտույտ և այդպես պտտելով 2-3 րոպե թեվը պտտում ենք դեպի աջ, կափարիչը բացվում է և ախտահանված հատիկը թափվում է նախորոք մեքենայի ներքեվի մասում կրյուչոկների վրա հագցրած 2 պարկերի մեջ։

Վորովհետև չոր ախտահանման ժամանակ գործադրվող դեղորայքը թունավոր են, ուստի բրիգադիրը հսկում է և ձեռք առնում նախազգուշական միջոցներ (դեղորայքի հետ գործ ունեցող բանվորները, աշխատանքի ժամանակ, անպայման պետք է ունենան ակնոցներ և բերանն ու քիթը կապեն թաց շորով կամ ունենան հատուկ ռեսպիրատորներ։ Ինչպես ախտահանելուց, նույնպես և ախտահանած սերմացուն ցանելուց հետո, անմիջապես բանվորները պետք է ձեռքերը մաքուր լվանան և ընդհանրապես թույնոտ ձեռքերը բերանին և աչքերին չ՝ քսեն)։ Չոր ախտահանման մեթոդով կարելի է ախտահանել միայն սերմացու ցորենը։ Ախտահանած հացահատիկը պետք է պահել չոր տեղ, վոր խոնավությունից չփչանա։

2. ԿԻՍԱՉՈՐ ԱԽՏԱՀԱՆՈՒՄ ՖՈՐՄԱԼԻՆՈՎ. — Այս մեթոդով կարելի է ախտահանել միայն սերմացու գարին և վարսակը։ Մեկ տոննն (61-փութ) սերմացու վարսակ ախտահանելու համար, վերցնում է 30 լիտր ֆորմալինի լուծույթ, իսկ մեկ տոննն գարու համար՝ 15-լիտր։ Լուծույթը պատրաստվում է այսպես՝ 40 տոկոսանոց ֆորմալինի մեկ լիտրը լուծում ենք 80 լիտր ջրի մեջ։ Ապա պատրաստած լուծույթի քանակը, համաձայն վերեվ տրված նորմայի լցնում ենք սրսկիչ ապպարատի (վերմորելի) մեջ, ախտահանող սերմացուն փռում ենք հարթ գետնի կամ փալասի վրա 30—40 սանտիմետր (մոտ կես արշին) հաստությամբ և մեկ բանվոր սկսում է սրսկել, իսկ նրա հետեվից գնացող բանվորը թիակով խառնում է այնքան, վոր հատիկները լրիվ թացանան։ Դրանից հետո ախտահանված սերմացուն կուտակում ենք մի տեղ և ծածկում պարկերով կամ փալասով ու այդպես թողնում 4-5 ժամ, վորից հետո բաց ենք անում, չորացնում և ցանում 2-3 որից վոչ ուշ։

3. ԹԱՑ ԱԽՏԱՀԱՆՈՒՄ.— Այս մեթոդով կարելի չե ախտահանել բոլոր տեսակի սերմացուները։ Ֆորմալինի լուծույթը պատրաստում ենք տակառի մեջ ամեն մի 12-լիտրանոց վեդրո ջրին վերցնելով 40 %-անոց 40 գրամ ֆորմալին, ապա ախտահանվելիք սերմացուն լցնում ենք պարկի մեջ այնքան, որ մեկ մարդ կարողանա վերցնել և իջեցնում ենք տակառի մեջ, որի մեջ լցված ե ֆորմալինի լուծույթը, պահում ենք այնտեղ ոչ ավել քան 2-3 րոպե, որից հետո հանում և հացահատիկը կուտակում ենք մեկտեղ և ծածկում պարկերով կամ փալասներով (որը նախորոք պետք ե ախտահանել) այդպես պահում 2 ժամ, ապա բաց ենք անում և փռելով բարակ շերտով ստվերում (արևի տակ չորացնելը արգելվում ե) չորացնում ենք և ցանում ոչ ուշ, քան 2-3 որում։

4. ԹԱՑ ԱԽՏԱՀԱՆՈՒՄ «ԵՖՍՏՐԱ» ՏԻՊԻ ՄԵՔԵՆԱՅՈՎ. – Այս մեթոդով կարելի չե ախտահանել միայն սերմացու ցորենը։ Ֆորմալինի լուծույթը պատրաստում ենք առանձին ամանում, վերցնելով 40 %-անոց մեկ լիտր ֆորմալինին 300 լիտր ջուր, ապա պատրաստած լուծույթից լցնում ենք մեքենայի վրայի առջևի մասի ֆորմալինի լուծույթի համար պատրաստած արկղը (նախորոք փակելով արկղի ներքևի մասում եղած ծորա-

կը, պատելով այն դեպի ձախ, մինչև վերջը) մինչև արկղի հետևի մասի վրա նշանակած դեղին գիծը։ Սերմացուն լցնում ենք ֆորմալինի լուծույթի արկղի հետևի մասի մեծ արկղը, որը տեղավորում ե 15 կիլո հացահատիկ և բաց անելով ֆորմալինի լուծույթի արկղի ծորակը, պատելով այն դեպի աջ, իսկ ցորենի արկղի հատակում գտնվող թիթեղյա ծածկոցը, սկսում ենք պտտել մեքենայի թևը այնպես, որ մեկ րոպեյում կատարի 60 պտույտ, որպիսի ժամանակընթացքում պետք ե ախտահանվի արկղի մեջ լցված ամբողջ հացահատիկը։

Ֆորմալինի լուծույթի և ցորենի համաչափ թափվելու աշխատանքը կանոնավորելու համար, պետք ե ղեկավարվել ֆորմալինի լուծույթի արկղի ձախ կողքի վրա տպված աղյուսակով։

ՀՍԽՀ սերմանման արտակարգ լիազոր
ԳՈՒԼՈՅԱՆ

Ո. Բ. Վ.—ի Հայաստանի բաժանմունքի
կառավարիչ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

С 31-К
1136
694

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ЯЗЫКОЗНАНИЯ
Академии Наук
СССР

5
17

16864